«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտորի ժ/պ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր

_____ **Գ.Գ. Գևորգյան**

9 հուլիսի 2020թ.

ԿԱՐԾԻՔ
առաջատար կազմակերպության

Դիանա Սպարտակի Գևորգյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Քննարկմանը մասնակցում էին «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Աբրահամյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Ս. Սարիբերկյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Հ. Համբարձումյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Վ. Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Ն.Խաչատրյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ.Հակոբջանյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Գալստյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Է. Միրզոյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Գ. Գյոզալյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ս. Ալեքսանյանը, տ.գ.թ., ասիստենտ Ա.Ե. Չիլինգարյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Հ. Թոմիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Ն.Մ. Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Տ.Ս. Վարազդատյանը և ասիստենտ Ա.Ֆ. Մկրտչյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գործընթացները նոր պահանջներ են առաջադրում ազգային տնտեսություններին: Այժմ համաշխարհային շուկայում առաջնությունը տրվում է առավել գիտատար և նորարարական միտվածություն ունեցող այն ապրանքներին ու ծառայություններին, որոնք հնարավորինս լիարժեք են համապատասխանում սպառողների պահանջներին: Սա է պատ-

ճառը, որ տեղի ունեցող համընդհանրական վերափոխումների պայմաններում տեղական ապրանքների ու ծառայությունների իրացման ծավալների ընդլայնման ավանդական հովանավորչական գործիքներն այլևս բավարար չեն: Անհրաժեշտ է համահունչ փոփոխություններ իրականացնել երկրի տնտեսության համակարգում՝ միտված առավել մրցունակ ապրանքների ու ծառայությունների արտադրության խթանմանը:

Մեր օրերում երկրի տնտեսության մրցունակության բարձրացման խնդիրները դարձել են առավել առաջնային: Աշխարհի բազմաթիվ երկրների կողմից վարվող ազատ առևտրային քաղաքականության արդյունքում էլ ավելի է սրվում գլոբալ մրցակցությունը՝ պահանջելով երկրի տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման առավել արդիական և ճկուն մեթոդների կիրառում: Որքան էլ արդյունավետ լինի պետության տնտեսական քաղաքականությունը, եթե մասնավոր հատվածում չկիրառվեն համահունչ մոտեցումներ, ապա երկրի տնտեսության մրցունակության բարձրացման ներուժը չի կարող լիարժեք օգտագործվել:

ՀՀ-ում տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման տեսանկյունից առանցքային են նաև արդյունավետ ինստիտուտների և ենթակառուցվածքների ձևավորման ու զարգացման նպատակները: Խնդիրն այն է, որ անցումը շուկայական տնտեսակարգին զուգորդվեց նաև ինստիտուցիոնալ փոփոխություններով. անհրաժեշտ էր ձևավորել շուկայի ձևավորմանն ու զարգացմանն անհրաժեշտ ինստիտուտներ: Ակներև է, որ տեղի ունեցող վերափոխումները հնարավորություն չեն տվել լիարժեք օգտագործելու ՀՀ-ում առկա ներուժը, ինչը հիմք է տալիս պնդելու, որ իրականացված քաղաքականությունը շտկման, հստակեցման և վերաուղղորդման կարիք ունի: Սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց հաղթահարման կառուցակարգերի մշակումն է՝ միտված համաշխարհային տնտեսական հարաբերություններում ՀՀ կազմակերպությունների դիրքերի

ամրապնդմանը, դրանց կողմից թողարկվող ապրանքների ու ծառայությունների իրացման ծավալների ընդլայնմանը:

Սահմանված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- հետազոտել երկրի տնտեսության մրցունակության տեսամեթոդաբանական հիմքերը,
- համակողմանիորեն դիտարկել երկրի «տնտեսության մրցունակություն» հասկացության վերաբերյալ մոտեցումները,
- բացահայտել երկրի տնտեսության մրցունակության արդի գործոնների առանձնահատկությունները,
- ուսումնասիրել տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձը և բացահայտել ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակը,
- իրականացնել ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների գնահատում,
- բացահայտել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական խոչընդոտներն ու մատնանշել դրանց հաղթահարման հիմնուղիները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն ունեցող որոշ արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ առանձնացվել է հետևյալը.

- ✓ Տրվել է «տնտեսության մրցունակություն» հասկացության նոր բնորոշում, որտեղ որպես առանցքային բնութագրիչ է դիտարկվել տնտեսական քաղաքականության ինստիտուտների արդյունավետությունը՝ միտված մարդկային, կապիտալ և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման շնորհիվ տևական ժամանակահատվածով կենսամակարդակի կայուն աճի ապահովմանը:

- ✓ Տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձի քննական վերլուծության արդյունքում բացահայտվել են դրա հիմնարար դրույթներն ու հստակեցվել ՀՀ-ում վերջինների կիրառման հնարավորություն-ները:
- ✓ Տնտեսաչափական մոդելի միջոցով իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել պարզելու առավել ազդեցիկ գործոնների շրջանակն ու բացահայտելու դրանց ներուժի առավել լիարժեք օգտագործման հնարավորությունները:
- ✓ Մշակվել է ՀՀ տնտեսության մրցունակության գնահատման մոդել, որտեղ որպես հիմնական հենասյուներ դիտարկվել են տնտեսական արդյունավետությունը, տեխնոլոգիական զարգացածությունը, մարդկային ռեսուրսները, կառավարման ու արտադրության արդյունավետությունը՝ համապատասխան ենթաբաժիններով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, ձևակերպված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացված են աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումներն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Երկրի տնտեսության մրցունակության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվում են մրցունակության էությունը և գործոնները, գնահատման մեթոդաբանությունը, մրցունակության ռազմավարությունը, ուսումնասիրվել է տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ տնտեսության մրցունակության արդի վիճակի և մակրոտնտեսական հիմնախնդիրների վերլուծություն» գլխում կատարվել է ՀՀ տնտեսության մրցունակության մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծություն և

գնահատվել է ՀՀ տնտեսության մրցունակությունը, նկարագրվել է արդի վիճակը: ՀՀ ազգային տնտեսության մրցունակության վերլուծությունը կատարվել է ԵԱՏՄ կազմի մեջ մտնող երկրների՝ Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Ռուսաստանի Դաշնության տնտեսությունների հետ համեմատության մեջ: Աշխատանքի այս հատվածում ատենախոսը անդրադարձել է նաև մակրոտնտեսական որոշ ցուցանիշների, կատարել վերլուծություն և որոշ միտումներ բացահայտել:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման ուղիները» գլխում կատարվել են մրցունակության բարձրացման ուղիների բացահայտում և տնտեսության մրցունակության գնահատում տնտեսաչափական մոդելի միջոցով: Ատենախոսը փորձել է բացահայտել տնտեսության մրցունակության և տնտեսական աճի միջև առկա կապը, դիտարկել է միջազգային փորձն ու ՀՀ-ում դրա կիրառման հնարավորությունները:

«Եզրակացություն» բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում կատարված հետևյալ եզրահանգումները, բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսությունում առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից հիմնականներն են.

1. Առաջին՝ «Երկրի տնտեսության մրցունակության տեսական եվ մեթոդաբանական հիմքերը» գլխի 1.2. «Երկրի տնտեսության մրցունակության գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը» ենթագլխում հեղինակի կողմից որպես տվյալ հետազոտության մեթոդական հենք դիտարկվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության համաթվի (ՀՄՀ)՝ լայն կիրառում ստացած, գնահատման մեթոդը, ինչը կրում է զուտ նկարագրական բնույթ: Մինչդեռ հետազոտության արդյունավետության նկատառումներից ելնելով՝ ցանկալի կլիներ տնտեսության մրցունակության գնահատման գործնականում կիրառվող մեթոդների գնահատման և համադրման ճանապապարհով առաջարկներ ներկայացվեր մեթոդաբանության վերանայման առումով: Մանավանդ, որ հեղինակն ինքն էլ իրավացիորեն նշում է, որ համաթվի գնահատման մեթոդը զերծ չէ քննա-

դատությունից /էջ 106/: Սակայն աշխատանքում անգամ փորձ չի արվել վերլուծել համաթվի թերությունները:

2. Ատենախոսության 3.2 ենագլխում հեղինակը ներկայացնում է ազգային մրցունակության համադրելի ցուցանիշի հաշվարկման նոր բանաձև: Նախ, որևէ կերպ հիմնավորված չէ բանաձևի տեսքը, հեղինակը չի քննարկել՝ հետևապես աշխատանքում չի ներկայացրել, թե ինչու է ընտրել հենց այդ տեսքով ֆունկցիա և ոչ թե օրինակ ցուցչային կամ որևէ այլ տեսքի ֆունկցիա: Բացի այդ, ենթագլխի վերջին պարբերությունում պնդում է կատարվում, թե առաջարկվող մոդելը ավելի ճշգրտորեն է հաշվարկում մրցունակությունը, քան ՀՏՖ-ն, ավելին՝ նշվում է, որ մոդելը կարող է օգտագործվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կանխատեսելու նպատակով: Կարծում ենք, ներկայացված մտքերն առավել հիմնավոր կլինեին, եթե հեղինակը փորձեր այդ մոդելի միջոցով հաշվարկել նախորդ ժամանակաշրջանների շնչային ՀՆԱ-ի ցուցանիշը, ապա այն համեմատեր փաստացիի հետ և եթե շեղումը փոքր լիներ, նոր միայն նման պնդում կատարեր:

3. Ատենախոսության 2-րդ նորույթում հեղինակը նշել է, որ տնտեսության մրցունակության բարձրացման միջազգային առաջավոր փորձի քննական վերլուծության արդյունքում բացահայտվել են դրա հիմնարար դրույթներն ու հստակեցվել ՀՀ-ում վերջինների կիրառման հնարավորությունները: Մինչդեռ աշխատանքի «Տնտեսության մրցունակության բարձրացման համաշխարհային փորձի ուսումնասիրություն և դրա կիրառումը ՀՀ-ում» 3.3 ենթագլխում հեղինակը դրսևորել է հետազոտության նպատակայնության տեսակետից ոչ համաչափ մոտեցում: Մասնավորապես չսահմանելով վերլուծության համար բովանդակային համեմատական չափորոշիչներ, ուղղակի բերվում է տարբեր երկրների՝ ԱՄՆ, Ճապոնիա, Չինաստան, Իռլանդիա, Ֆինլանդիա, Չեխիա, տնտեսական մրցունակության խնդիրները և դրանց հաղթահարման փորձը /էջ 134-149/ և բավական հակասական ու անհասկանալի դատողությունների հիման վրա, ընդամենը մեկ էջի շրջանակներում, կատարվել է ՀՀ-ի մասով մակերեսային և խիստ թեզիսային բնույթ կրող եզրահանգում: Փաստացի որևէ կերպ չի հիմնավորվել, թե դիտարկված երկրները որքանով են համադրելի ՀՀ-ի հետ, կամ այդ երկրների փորձը որքանով է կիրառելի ՀՀ-ի համար:

4. Ատենախոսության 3-րդ նորույթում նշվել է, որ տնտեսաչափական մոդելի միջոցով իրականացվել է ՀՀ տնտեսության մրցունակության գործոնների վերլուծություն, ինչը հնարավորություն է տվել պարզելու առավել ազդեցիկ գործոնների շրջանակն ու բացահայտելու դրանց ներուժի առավել լիարժեք օգտագործման հնարավորությունները: Հեղինակը տնտեսաչափական մոդելի միջոցով ՀՄՀ-ի վրա տարբեր գործոնների ազդեցությունը փորձել է գնահատել է աշխատանքի 3.2 ենթագլխում և քրոս-կորելիացիայի արդյունքների հիման վրա կազմել է աղյուսակ 3.2.1-ը: Նախ, աշխատանքում որևէ անդրադարձ չկա ստացված կորելիացիայի գործակիցների նշանակալիությանը, ինչը հնարավորություն չի տալիս հասկանալ, թե ի վերջո բացահայտված կապերից որոնք են նշանակալի և որոնք՝ ոչ նշանակալի: Բացի այդ, նույն 3.2.1 աղյուսակում առկա են անհասկանալի ցուցանիշներ, որոնց հեղինակը չի անդրադարձել և աշխատանքում չի փորձել մեկնաբանել: Օրինակ՝ կրթության բաղադրիչի և ՀՄՀ-ի կորելացիայի գործակիցը ստացվել է -0,03. ինչը նշանակում է, որ կրթության բաղադրիչը բացասական է ազդում տնտեսության մրցունակության վրա, ինչը բնականաբար անտրամաբանական է, իսկ հեղինակն էլ որևէ կերպ չի փորձել խորամուխ լինել ստացված ցուցանիշների էությունը հասկանալուն: Այսպիսով՝ աշխատանքի 3-րդ նորույթը ևս հիմնավորված չէ:

5. Ատենախոսության 3.2 ենթագլխում հեղինակը խոսում է տնտեսության մրցունակության նոր մոդելի կարևորության մասին և նշում, որ ազգային տնտեսության մրցունակության գնահատման առաջարկվող մոդելը կառուցվում է 5 հենասյուների վրա: Ի թիվս այլ գործոնների այստեղ առանձնացվում է արտադրության արդյունավետությունը: Գծապատկեր 3.2.1-ից երևում է, որ արտադրության արդյունավետության բաղադրիչի տակ ատենախոսն ի նկատի ունի տնտեսության տարբեր ճյուղերի՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, շինարարության և այլն, արդյունավետությունը: Սակայն անհասկանալի է, թե ինչու է հեղինակը այստեղ առանձին հատուկ շեշտադրել նորարարական տեխնոլոգիաների արդյունաբերությունը, այն դեպքում, երբ որպես խոշոր ոլորտ արդյունաբերությունը առկա է: Չէ, որ նորարարական տեխնոլոգիաների արդյունաբերությունը արդյունաբերության մի մասն է: Ընդ որում միայն այս ոլորտի պարագայում է նման

առանձնահատուկ մոտեցում ցուցաբերվել: Պարզ չէ, թե հեղինակը ինչ է ուզում սրանով շեշտել:

6. Աշխատանքում հեղինակը խոսում է ՏՀՏ ոլորտի խթանման անհրաժեշտության մասին, սակայն աշխատանքում որևէ անդրադարձ չկա այն մասին, թե ՏՀՏ ոլորտում ՀՀ-ն ինչ ծրագրեր են իրականացվում, որևէ խոսք չկա «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի մասին և այլն:

7. Աշխատանքում ներկայացված չէ ոլորտային ուսումնասիրություն, պարզելու համար, թե ՀՀ տնտեսության որ ոլորտներն են առավել մրցունակ, որ տեսակի ապրանքները կամ ծառայությունները կարող են իրենց տեղը և դիրքը զբաղեցնել միջազգային շուկաներում, կամ որ ոլորտներին պետք է կառավարությունը աջակցի մրցունակությունը բարձրացնելու համար: Այս հարցադրումներին հեղինակը անհասկանալիորեն անդրադառնում է միայն առաջարկությունների հատվածում ու շատ ընդհանրական:

8. Առաջարկությունները խիստ դեկլարատիվ են ու ընդհանրական: Որպես առաջարկություն ատենախոսը նշում է ՀՀ-ի կողմից նպատակային և հասցեական քաղաքականություն իրականացնելու անհրաժեշտությունը, կամ ստվերային տնտեսության ծավալների կրճատումը, կամ փոքր և միջին ձեռնարկատիրության խթանումը և այլն: Սակայն կոնկրետ գործուն մեխանիզմ, քայլ, ռազմավարություն նախանշված չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության վերաբերյալ կատարված դիտողությունները էապես անդրադառնում են հետազոտության գիտական արժեքի, ստացված արդյունքների և հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ատենախոսությունում ստացված արդյունքները և դրանց կիրառման հնարավորությունները հստակ տեսանելի չեն:

Սեղմագիրը համահունչ է ատենախոսության բովանդակությանը, իսկ հրատարակված 7 (յոթ) գիտական հոդվածներում լիովին ընդգրկված են ատենա-խոսության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով՝ Դիանա Սպարտակի Գևորգյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման մակրոտնտեսական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, ուստի կարծում ենք, որ հեղինակը չի կարող հայցել Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի 09.07.2020 կայացած նիստում (արձանագրություն թիվ 11):

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝ Կ. Գ. Խաչատրյան

Գրախոսներ՝

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի պրոֆեսոր,
տ.գ.թ.՝ Ա. Ս. Սարիբեկյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի ասիստենտ,
տ.գ.թ.՝ Ն. Մ. Սահակյան

Կ. Խաչատրյանի, Ա. Սարիբեկյանի և Ն. Սահակյանի ստորագրությունները հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար՝ Լ. Հովսեփյան